ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/2-Ն

ք. Երևան «16» հունվարի 2020թ.

«Ջրային կոմիտեն», ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու),մի կողմից, և «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ և «Թունել» ՍՊԸ կոնսորցիում, ի դեմս տնօրեններ Յու. Ջավադյանի և Ա. Սանահյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարողներ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է

- «ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ ԹԻՎ 2 թունելի վթարային հատվածների՝ 2020 թվականին իրականացվող հիմնանորոգման աշխատանքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության տրամադրման աշխատանքների» կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **8 400 000** (ութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[22]:[1]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին[23]:[2]

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից

---

[22] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպասնելիք պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[23] *Եթե գնման առարկան չեն հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները, ապա սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից:*

ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Պայմանագիրը կազմված է **14** էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ԿԱՏԱՐՈՂ
Ջրային կոմիտե	«Թունել» ՍՊԸ	«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ք. Երևան Մոսկովյան 31 փ. բն. 20	ք. Երևան Վ.Վաղարշյան
ՖՆ վարչություն	հեռ. 091 20 42 91	հեռ. 010 27 36 60
Հ/Հ	Բանկ "Էվոկաբանկ" ՓԲԸ	Բանկ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02555816	Հ/Հ 1660000445850100	Հ/Հ 11500 00088680300
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող	ՀՎՀՀ 02542333	ՀՎՀՀ 00012859
	էլ. հասցեն tunnel.ltd@yandex.ru	էլ. հասցեն awd@hjni.am
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	Ա. ՍԱՆԱՀՅԱՆ	ՅՈՒ. ՋԱՎԱԴՅԱՆ
/ստորագրություն/	(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.	

Հավելված N 1
«16» հունվարի 2020թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/2-Ն ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը**
1	71241200/520	նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում ***կարդա ստորև	դրամ	8 400 000	8 400 000	1	ՀՀ Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի տարածք (Արփա-Սևան N 2 թունել) նախագծային փաստաթղթերը հանձնել Վարդենյաց 13ա	*ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 1,5 ամիս*

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Չափաբաժին 1

***ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

<<Արփա-Սևան>> թիվ 2 թունելի վթարային հատվածների՝ 2020 թվականին իրականացվող հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության անցկացման եզրակացության տրամադրման աշխատանքների

<u>Առաջադրանքի պայմանները</u>

Ընդհանուր տվյալներ

1. Համառոտ տեղեկություններ <<Արփա-Սևան>> ջրատարի վերաբերյալ

<<Արփա-Սևան>> ջրատարը կառուցվել է 1963-1981 թվականների ընթացքում՝ Արփա և Եղեգիս գետերի ջրերը Սևանա լիճ տեղափոխելու նպատակով: Ջրատարն ունի 49,10 կմ երկարություն, որից 48,3 կմ կազմում են թիվ 1 և թիվ 2 թունելները, 0,7 կմ՝ հեռացնող ջրանցքը, իսկ 0,07 կմ՝ Եղեգիս գետի վրայով թունելներն իրար միացնող ջրանցույցը: Արփա գետի ջրերը կուտակվում են Կեչուտի ջրամբարում, որտեղից հնարավոր է ջրի բացթողումը իրականացնել հետևյալ ուղղություններով.

ա/ թիվ 1 թունելով ջուրը տեղափոխվում է Եղեգիսի կիրճ, որտեղ թիվ 1 և 2 թունելներն իրար միացնող Եղեգիսի ջրանցույցով և թիվ 2 թունելով ջուրը տեղափոխվում է Սևանա լիճ,

բ/ ջրամբարի իրիգացիոն ջրթողով ջուրը բաց է թողնվում Վայքի տարածաշրջանի հողատարածքների ինքնահոս ոռոգման համակարգ:

2. Թիվ 2 թունելի ներկա տեխնիկական վիճակը

Թունելի վթարային հատվածներում նկատվում են թունելի կտրվածքի դեֆորմացիաներ, երեսարկների և հատակների ձևախախտումներ, ճաքեր, որոնց հետագա զարգացումներով պայմանավորված թունելի

հետագա շահագործումը կարող է վտանգվել: Ստորև ներկայացվում է ակնադիտական զննումների արդյունքում հայտնաբերված թունելի վթարային հատվածները.

2.1 <<Արփա-Սևան>> թիվ 2 թունելի 5, 6, 7, 8 թունելախորշերի (Եղեգիսի կողմից) տեխնիկական վիճակի ուսումնասիրությունների արդյունքները.

Հ/հ	ՈՒՀ-ից մինչև ՈՒՀ	Հատվածի երկարությունը, մ	Նկարագրությունը
1	204+28-204+30	2	Այս հատվածում պոմպակայանի խորշի խցանված բետոնը քայքայվել է: Ջուրը, ողողելով այդ խոռոչը մտնում է բետոնի երեսարկի ետևը և քայքայում նրան: Հատակը քայքայված է:
2	240+30-240+34	4	Տաշտաձև կտրվածք: Այս հատվածում թաղակամարի աջ և ձախ մասերում բետոնը ջարդված, թափված է մոտ 0.8-1.0մ2 մակերեսով: Բետոնի հաստությունը այստեղ մոտ 5-7սմ է:
3	242+15-243+15	100	Միաձույլ բետոնյա երեսարկում կան երկայնական և շրջանաձև ճեղքեր մինչև 13մմ բացվածքով: Հատակը տեղ-տեղ քայքայված է:
4	243+30-243+36	6	Տաշտաձև կտրվածք: Պատերի աջ և ձախ մասե-րում բետոնի երեսարկը քայքայված է: Բետոնյա երեսարկի թաղակամարը քանդվել է 1.5մ լայնութ-յամբ /2-3մ2 մակերեսով/: Առկա են թերմալ ջրերը:
5	243+53-243+56	3	Թաղակամարի բետոնը ձախ հատվածում 3մ2 մինչև 6մ2 մակերեսով քանդվել է: Երևում են ժամանակավոր ամրակապի տարրերը, իսկ նրանց ետևում քանդված ապարներից առաջացած խոռոչը ունի մինչև 1մ խորություն: Հատակը քայքայված է:
6	258+00-258+10 262+60-262+85	10 25	Կան երկայնական ճաքեր բետոնե երեսարկի պատերում մինչև 13մմ բացվածքով, տեղ-տեղ հատակը քանդված է: Պատերի դեֆորմացիան ունի աճման միտում:
7	289+30-289+42	12	Աջ և ձախ կիսակամարում կան երկայնական ճաքեր մինչև 1սմ բացվածքով: Կան ճաքեր պատերում:
8	290+00-290+37	37	Կլոր կտրվածք: Ե/բ բլոկները դեֆորմացված են և կարերից տեղաշարժված 5-12սմ: Մի քանի բլոկներ ճաքճքված են և ջարդված:
9	305+64-305+80	16	Տաշտաձև կտրվածք: Երկայնական ճաքեր աջ պատում 5-6մմ բացվածքով:
10	306+02-306+06	4	Տաշտաձև կտրվածք: Առկա են մանր ճաքեր մինչև 3մմ բացվածքով:
11	306+80-306+88	8	Բետոնյա երեսարկի աջ պատը դեֆորմացված է, ճաքճքված: Հատակը քայքայված է:
12	308+50-308+61	11	Տաշտաձև կտրվածք: Աջ պատում բետոնյա երեսարկը հատակից 60-70սմ բարձրությամբ ջարդված, թափված է: Երևում են ապարները:
13	310+49-310+58	9	Տաշտաձև կտրվածք: Պատերին կան մինչև 3մմ բացվածքով ճաքեր: Թունելի բարձրությունը այս հատվածում կազմում է 3.44մ:
14	333+03.8- 333+25.7	21.9	Կլոր կտրվածք: Ե/բ բլոկները միացման կարերում դեֆորմացվել և տեղաշարժվել են իրար նկատմամբ 2-

			3սմ-ի չափով: Կան նաև ճաքճքված ե/բ բլոկներ:
15	333-38-333+46	8	Կլոր կտրվածք: Ե/բ բլոկները դեֆորմացվել են, միմյանց նկատմամբ տեղաշարժվելով 3-4սմ:
16	337+80-337+86	6	Տաշտաձև կտրվածք: Ձախ պատը ճաքած և առաջ է եկած 2-3սմ:
17	343+51.4-343+67	15.6	Կլոր կտրվածք: Ե/բ բլոկները ձախ կիսակամարում դեֆորմացվել են և կարերում բացվել 5-7սմ: Կիսակամարի բլոկների մի մասի վրա կան մանր քառսային ճաքեր:
18	346+59-346+73	14	Աջ և ձախ պատերից և կիսակամարի միացման մասում առկա են երկայնական ճաքեր 1-2սմ բացվածքով: Թունելի բարձրությունն ամենացածր մասում 3.35մ:
19	348+73-349+54	81	Տաշտաձև կտրվածք: Ձգվում են երկայնական ճաքեր պատերի և կիսակամարի միացման մասում 1-5սմ բացվածքով: Թունելի լայնությունը 3.43-3.54մ:
20	354+31-355+08	77	Տաշտաձև կտրվածք: Աջ պատը հատակից մոտ 1.7մ բարձրության վրա երկայնական ճաքեր 2-6սմ բացվածքով:
21	355+22-255+36	14	Տյուբինգներ ե/բ երեսարկով: Կամարը ամբողջությամբ քայքայված և դեֆորմացված է: Անկանոն տեղադրված ամրանները ծռված են: Կամարի ետևում տեղ-տեղ երևում են ե/բ տյուբինգներ:
22	355+36-355+47	11	Կլոր կտրվածք: 0.7մ լայնությամբ բլոկները կարերից բացվել են 12-13սմ:
23	355+77-355+80	3	4 հատ օղակ տեղաշարժվել և դեֆորմացվել են, ձախ կիսակամարի և աջ պատի կարերում բացվելով 5-6սմ:
24	355+92-356+04	12	Կլոր կտրվածք: Ե/բ բլոկները տեղաշարժվել են, կարերում բացվելով 2-5սմ: ՈՒՀ355+99-ում փականի բլոկի կարի բացվածքը կազմում է 7-8սմ:
25	356+04-356+58.5		Տեղ-տեղ բլոկները կարերում բացված են 2-3սմ, իսկ մեծամասամբ նորմալ վիճակի են:
26	356+58.5-357+01	42.5	Ե/բ բլոկները տեղաշարժվելով առաջացրել են կարերում բացվածքներ՝ աջ պատին մինչև 12սմ, ձախ կիսակամարում 6-8սմ: Կամարը կողքերից սեղմվելով բարձրացրել է, ստանալով ձվի սուր մասի տեսք:
27	357+65-358+00		Աջ և ձախ կիսակամարներում բլոկները կարերում բացվել են 2-5սմ:
28	359+06-359+28	22	Թունելի կտրվածքը դառնում է ձվաձև, կիսակամարում բլոկները սեղմվել են, կարերում բացվելով տեղ-տեղ 18-20սմ: Թաղը ստացել է եռանկյունի տեսք:
29	359+28-359+70		Ե/բ բլոկների կարերի բացվածքները փոքրանում են 2-3սմ: Ձու չի:

30	360+00-361+00	100	Կիսակամարի մասում կարերից բացվել են բլոկները տեղ-տեղ 4-6սմ: Կտրվածքը ստացել է ձվի տեսք: ՈՒՀ360+28-ից կարերի բացվածքը հասնում է 12-15սմ, իսկ ՈՒՀ360+45-ում կարերի փականը փշրվել է և թաղը ստացել է եռանկյունի տեսք: Այնուհետև կարերը փոփոխական բացվածքներով շարունակում են մինչև ՈՒՀ361+00:
	Ընդամենը	675.0	

2.2 <<Արփա-Սևան>> թիվ 2 թունելի 9, 10, 11 թունելախորշերի (Ծովինարի կողմից) տեխնիկական վիճակի ուսումնասիրությունների արդյունքները

Հ/հ	ՈՒՀ-ից մինչև ՈՒՀ	Հատվածի երկարությունը, մ	Նկարագրությունը
1	380+00-384+00	400	Աջ և ձախ պատերը միաձույլ բետոնյա հատակի հետ միացման հատվածում 10սմ խորությամբ և 20սմ-ից 40սմ բարձրությամբ լվացված են (վուտերի վերականգնում)
2	393+00-393+90	90	Հատակը ջարդոտված-խորդուբորդ է 90մ երկարությամբ
3	396+91.5 (4 հորան)	15	Հորանաբակի մուտքի մոտ թունելի հատակը 15մ երկարությամբ քանդված է
4	397+00-397+50	50	Հատակը քանդված է 50մ երկարությամբ
5	399+25-399+50	25	Հատակը քայքայված է 25մ երկարությամբ
6	404+00-405+00	30	Հատակը 30մ երկարությամբ ամբողջությամբ քանդված է
7	409+40-410+00	60	Հատակը քանդված է 15մ երկարությամբ, ջարդոտված-խորդուբորդ է 45մ երկարությամբ
8	411+00-418+00	350	Հատակը տեղ-տեղ քանդված է
9	419+00-429+00	1000	Հատակը ամբողջությամբ քանդված է
10	429+00-430+00	100	Հատակը ջարդոտված-խորդուբորդ է
11	431+70-432+00	30	Հատակը քայքայված է
12	432+00-432+30	30	Հատակը լրիվ քանդված է
13	434+00-437+00	300	Հատակը ամբողջությամբ քանդված է
14	437+00-437+20	20	Հատակը քայքայված է
15	437+85-438+15	30	Հատակը քանդված է
16	439+00-440+00	30	Թաղակամարի աջ և ձախ կողմը երկայնական ճա-քեր 1.5-2.0սմ բացվածքով: Հատակը քայքայված է:
17	440+30-441+00	70	Հատակը քանդված է 20մ երկարությամբ, ջարդոտված-խորդուբորդ է 50մ երկարությամբ
18	441+00-442+00	20	Թունելի աջ և ձախ պատերում երկայնական ճաքեր 20մ երկարությամբ 1.5-2.0սմ բացվացքով: Հատակը քայքայված է:
19	441+80-442+00	20	Հատակը քայքայված է
20	442+20-443+00	80	Հատակը քայքայված է
21	444+50-444+80	30	Հատակը քայքայված է
22	445+00-445+20	20	Հատակը քայքայված է
23	446+70-447+35	65	Հատակը քայքայված է
24	447+90-448+15	25	Հատակը քանդված է
25	449+00-454+00	250	Հատակը 50% քանդված է
26	454+00-455+00	100	Հատակը քանդված է 50մ երկարությամբ, ջարդոտված-խորդուբորդ է 50մ երկարությամբ

27	463+00-463+15	15	Հատակը քանդված է
28	466+00-471+20	520	Հատակը քանդված է և ջարդոտված-խորդուբորդ է
29	473+00-483+31	1031	Հատակը քանդված է, կան մեծ փոսեր
	Ընդամենը	4806.0մ	
	Ընդամենը	50մ երեսարկ 4356մ հատակ 400մ վուտեր	

3. Նախագծային լուծումներ պահանջող խնդիրները

Թիվ 2 թունելի ակնադիտական զննումների արդյունքում ներկայացված տեխնիկական վիճակը պահանջում է լրացուցիչ պարտադիր գործիքային ուսումնասիրությունների իրականացում, նախագծման համար պահանջվող ելակետային տվյալների ձեռքբերում ու հավաքագրում, որի հիման վրա անհրաժեշտ է առանձնացնել առավել վտանգավոր հատվածները, կազմել 2020 թվականի ընթացքում հնարավոր առաջնահերթ կարգով իրականացվող հիմնանորոգման աշխատանքների ցանկը, առաջարկել նախագծային լուծումներ, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության անցկացման համար:

4. Առաջարկված լուծումները պետք է՝

ա/ հիմնված լինեն ՀՀ-ում գործող տեխնիկական նորմերի, ստանդարտների, միջպետական շինարարական նորմերի վրա /ՀՀՇՆ; СНиП; ГОСТ; СТСЭВ; ՀUS; ՇՆՉ; МСП և այլն /,

բ/ ապահովեն թունելով ջրի հոսքերի ազատ տեղափոխման հնարավորություն:

գ/ աշխատանքների կատարումը նախատեսել տարվա 7 ամիսների ընթացքում՝ հունվար-մարտ և սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, մնացած 5՝ ապրիլ օգոստոս ամիսներին հալոցքի ջրերը թունելով Սևանա լիճ տեղափոխելու նպատակով:

5. Նախագիծը պետք է կազմված լինի հայերեն և ռուսերեն լեզուներով և պարունակի՝

ա/ բանվորական նախագիծ՝ իր մասնագրերով,
բ/ աշխատանքների իրականացման պլան-ժամանակացույցերը,
գ/ աշխատանքների ծավալների տեղեկագրեր, նախահաշիվներ /կոնֆեդիցիալ/:

6. Նախագծողը պարտավոր է ներկայացնել նախագծի փորձաքննության եզրակացությունը: Փորձաքննության անցկացման արժեքը պետք է ընդգրկվի պայմանագրի ֆինանսական առաջարկի մեջ:

Շինարարական աշխատանքների իրականացման գնման փաթեթը կազմելու համար կնքված և ստորագրված տարբերակով Կատարողը Պատվիրատուին պետք է ներկայացնի.

- աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների, աշխատանքային ռեսուսների, լիցենզիաների ցանկը, կատարվող աշխատանքների երաշխիքային ժամկետները:
  - գծագրեր՝ ընդհանուր բացատրագրով – 5 օրինակ հայերեն, 1 օրինակ ռուսերեն
  - աշխատանքների ծավալների ցուցակ – 5 օրինակ հայերեն, 1 օրինակ ռուսերեն
  - նախահաշիվ – 4 օրինակ հայերեն, 1 օրինակ ռուսերեն
  - Ծավալաթերթ-Նախահաշիվ 1-ական օրինակ հայերեն և ռուսերեն լեզվով:

Աշխատանքի ծավալների ցուցակները, գծագրերը և նախահաշիվները Պատվիրատուին ներկայացվում են նաև էլեկտրոնային կրիչով՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:

Բոլոր գծագրերը պետք է պատրաստվեն՝ օգտագործելով համակարգչային CAD ծրագիրը և համապատասխանեն A0 կամ A1 չափին: Բոլոր փաստաթղթերն ու զեկույցները պետք է լինեն A4 ձևաչափով տպագրված:

Նախագծային աշխատանքների տևողությունը՝ 1,5 ամիս:

ՆՇՈՒՄ. Կատորողը, առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության, չի կարող սեփականացնել, օգտագործել կամ հրապարակայնորեն տարածել հիշյալ աշխատանքների փաստաթղթերը:

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	1,5 ամիս
Աշխատանքի կատարման հասցեն	
ՀՀ Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի տարածք (Արփա-Սևան N 2 թունել)	
Նշված աշխատանքների ձեռքբերումն իրականացվելու է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Թունել» ՍՊԸ
ք. Երևան Մոսկովյան 31 փ. բն. 20
հեռ. 091 20 42 91
Բանկ "Էվոկաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 1660000445850100
ՀՎՀՀ 02542333
էլ. հասցեն tunnel.ltd@yandex.ru

Ա. ՍԱՆԱՀՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ
ք. Երևան Վ.Վաղարշյան
հեռ. 010 27 36 60
Բանկ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500 00088680300
ՀՎՀՀ 00012859
էլ. հասցեն awd@hjni.am

ՅՈՒ. ՋԱՎԱԴՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«16» հունվարի 2020թ. կնքված
ԶԿ-ԳՀԱՇՁԲ-20/2-Ն ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/520	նախագծերի պատրաստու ծախսերի գնահատում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են դրամով, իսկ պայմանագիրը կնքելիս դրամի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Թունել» ՍՊԸ
ք. Երևան Մոսկովյան 31 փ. բն. 20
հեռ. 091 20 42 91
Բանկ "Էվոկաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 1660000445850100
ՀՎՀՀ 02542333
էլ. հասցեն tunnel.ltd@yandex.ru
Ա. ՍԱՆԱՀՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ
ք. Երևան Վ.Վաղարշյան
հեռ. 010 27 36 60
Բանկ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500 00088680300
ՀՎՀՀ 00012859
էլ. հասցեն awd@hjni.am
ՅՈՒ. ՋԱՎԱԴՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված 3
«16» հունվարի 2020թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/2-Ն ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2020թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2020 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2020 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 16 » հունվարի 2020թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/2-Ն ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 2020թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2020թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն